# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**10 փետրվարի 2023 թվականի N 64 - Ա**

**ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 25-ի N 1079-Ն որոշումը՝

**որոշում եմ.**

1. Սյունիքի մարզի «Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Կապան համայնքի Առաջաձոր գյուղի 1-ին փողոց 36 հասցեում գտնվող 155,3 քառ. մետր մակերեսով պոլիկլինիկայի և Շիկահող գյուղի 2-րդ փողոց 19 հասցեում գտնվող 153,6 քառ. մետր մակերեսով ամբուլատորիայի շենքերը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնելու նպատակով ստեղծել գույքի հանձնման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ մինչև ս/թ մայիսի 10-ը ապահովել նախատեսված գույքի հանձնման աշխատանքների իրականացումը և ներկայացնել տեղեկատվություն:

10.02.2023

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. փետրվարի 10
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023 թվականի փետրվարի 10 -ի
N 64-Ա որոշման

# ԿԱՌՄ

Սյունիքի մարզի Կապան համայնքի Առաջաձոր գյուղի 1-ին փողոց 36 հասցեում գտնվող 155,3 քառ. մետր մակերեսով և Շիկահող գյուղի 2-րդ փողոց 19 հասցեում գտնվող 153,6 քառ. մետր մակերեսով «Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ամբուլատորիաների շենքերը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնելու հանձնաժողովի.

1. Արմեն Թադևոսյան – Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)

2. Արփինե Բաղդասարյան - Մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի մասնագետ

3. Անուշ Մովսիսյան - «Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

4. Լուսինե Հայրապետյան- «Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվապահ:

2/10/2023

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան